ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

04.03.24թ N 02/1.9/2941-2024

«Հետք» էլեկտրոնային օրաթերթի լրագրող
պարոն Արեն ՆԱԶԱՐՅԱՆԻՆ
էլ.փոստ՝ arennazaryan20@gmail.com

Հարգելի պարոն Նազարյան

Ի պատասխան Նոյեմբերյան համայնքի Դովեղ բնակավայրում դպրոցի կառուցման վերաբերյալ Ձեր՝ 2024 թվականի փետրվարի 27-ի հարցման՝ տրամադրում ենք ծրագիրը համակարգող վարչությունում առկա տեղեկատվությունը:

Առդիր՝ 1 էջ:

Հարգանքով՝

04/03/2024

X

ԱՐԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Signed by: MKRTCHIAN ARAM 2707650080

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ
«____» _____ 20__ թ.

Մամուլի քարտուղար Գայանե Ավագյան
հեռ. 011 621 711

Տեղեկատվություն
ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Դովեղ գյուղի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման վերաբերյալ

ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Դովեղ գյուղի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման համար նախապես դիտարկվել էր գործող դպրոցի տարածքը: Սակայն դասապրոցեսը չընդհատելու նպատակով և հետագայում դպրոցի շենքն այլ նպատակով օգտագործելու հնարավորությունը հաշվի առնելով՝ քննարկումների արդյունքում որոշվել է համայնքի կողմից նոր հողատարածք տրամադրել:

2022 թվականի դեկտեմբերի 22-ին տրված շինթույլտվության հիման վրա 27.12.2022թ. սկսվել են Դովեղ գյուղի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման շինարարական աշխատանքները: Հաշվի առնելով գյուղի ռելիեֆի առանձնահատկությունները և շինարարական աշխատանքների ընթացքում ի հայտ եկած գրունտային նոր պայմանները, ինչպես նաև շինհրապարակի տեղամասին կից ճանապարհի առկայությունը՝ առաջացել է դպրոցի կառուցման աշխատանքներին զուգահեռ զգալի ծավալի հողային նոր աշխատանքների իրականացման և հենապատի կառուցման անհրաժեշտություն: Այդ նպատակով մշակվել է նախագծանախահաշվային փաստաթղթերի նոր փաթեթ, որը սահմանված կարգով անցել է քաղաքաշինական փորձաքննություն և ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 2-ի N1887-Ա որոշմամբ Քաղաքաշինության կոմիտեին թույլատրվել է «Դովեղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մոդուլային շենքի կառուցման պայմանագրում կատարել ձեռք բերվող աշխատանքների ծավալների ավելացում: Արդյունքում 743.233.320 ՀՀ դրամ պայմանագրային գումարն ավելացել է 475.112.698 ՀՀ դրամով՝ կազմելով 1.218.345.918 ՀՀ դրամ:

Վերոնշյալ հանգամանքներով պայմանավորված՝ պայմանագրի կատարման ժամկետը երկարացվել է 90 օրով:

Ներկա պահին ընթանում են դպրոցի և հենապատի կառուցման աշխատանքները:

Քաղաքաշինական ծրագրերի իրականացման վարչություն